ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08/116
ԱՄՀ մշտական նարկայացուցչի գրասենյակ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան
19 մայիսի, 2008

Արժույթի Միջազգային Հիմնադրամն ավարտում է ԱԿՏԱ ծրագրի վեցերորդ ավարտական ամփոփումը և Հայաստանին տրամադրում 5.4 միլիոն դոլարի վարկ

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Գործադիր խորհուրդը այսօր ավարտեց Հայաստանի տնտեսական ցուցանիշների վեցերորդ ավարտական դիտարկումը Աղքատության կրճատման և տնտեսական աճի (ԱԿՏԱ) ծրագրի ներքո: Դիտարկման ավարտը թույլ է տալիս պայմանագրի շրջանակներում Հայաստանին տրամադրել 3.32 միլիոն ՀՓԻ-ի (ՍԴՌ) համարժեք գումար (շուրջ 5.4 միլիոն դոլար), որի արդյունքում ծրագրի ընդհանուր հատկացումը կկազմի 23 միլիոն ՀՓԻ (շուրջ 37.3 միլիոն դոլար) (տես՝ Մամլո հաղորդագրություն N 05/123):

Գործադիր խորհրդի քննարկումների ավարտից հետո ԱՄՀ-ի կարգադրիչ Փոխտնօրեն և Նախագահի պաշտոնակատար պարոն Մուրիլո Պորտուգալը հայտարարեց.

«Հայաստանի հավատարմությունը շրջահայաց մակրոտնտեսական քաղաքականություններին և կառուցվածքային բարեփոխումների գծով ձեռք բերված առաջընթացը զգալիորեն նպաստել են ԱԿՏԱ երրորդ ծրագրի շրջանակներում արձանագրված բարձր ցուցանիշներին: Աղքատության զգալի կրճատումը ձեռք է բերվել բարձր տնտեսական աճով և ցածր սղաճով բնութագրվող մակրոտնտեսական պայմաններում: Մասնավոր փոխանցումների և օտարերկրյա ուղղակի ներդրումների մեծածավալ հոսքերը մեղմացրեցին արագ աճող ներմուծման ազդեցությունը վճարային հաշվեկշռի վրա: Միջնաժամկետ հեռանկարը շարունակում է դրական մնալ ապահովելով բարենպաստ պայմաններ ներդրումների համար»:

«Շարունակվող ողջամիտ հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները հետագայում նույնպես կերաշխավորեն մակրոտնտեսական կայունությունը և արտաքին մրցունակությունը մեծածավալ արտաքին ներհոսքերի և աճող սղաճային վտանգների պայմաններում: Բյուջեով նախատեսվածից խիստ հարկաբյուջետային քաղաքականությունը 2008 թ. ընթացքում կլինի արդարացված, քանի որ այն կնպաստի դրամավարկային

քաղաքականությանը պատշաճ խարսխել գնաճի սպասումները: Ճկուն փոխարժեքի վրա հիմնված գործող դրամավարկային քաղաքականությունը շարունակում է լավագույն տարբերակը հանդիսանալ Հայաստանի համար: Իշխանությունների կողմից անցյալ տարվա ընթացքում, ժամանակին ձեռնարկվող դրամավարկային քաղաքականության գործողությունները վկայում են, որ երկրի իշխանությունները մտադիր են պահպանել գների կայունությունը և նպաստում են գնաճային սպասումների զսպմանը՝չնայած սննդամթերքի և էներգակիրների համաշխարհային գնաճի ուժեղ ճնշմանը»:

«Հարկաբյուջետային քաղաքականությունը վերլուծելու կարողությունների ամրացումը կարևոր դեր կխաղա հարկաբյուջետային քաղաքականության արդյունավետության բարելավման և հարկաբյուջետային կարգապահության պահպանման համար: Թափանցիկ և ոչ կամայական գործելակերպով ձեռք բերվող եկամուտների հավաքագրման ավելացումը նույնպես առանցքային դեր կունենա, ենթակառույցների և գործարար միջավայրի բարելավման և աղքատության կրճատման անհրաժեշտության պայմաններում»:

«Իշխանությունները մտադիր են շարունակել կառուցվածքային բարեփոխումների ծրագրի իրականացումը, վերացնելով լայնածավալ տնետեսական աճին և տնտեսական մրցակցությանը խանգարող մնացած խոչընդոտները: Հետագա բարեփոխումները միտված կլինեն արտադրողականության աճն ապահովող կառուցվածքային բարեփոխումների խորացմանը, հատկապես կրճատելով գործարարությամբ զբաղվելու ծախսերը, հաղորդելով նոր լիցքեր ներքին մրցակցությանը, դիվերսիֆիկացնելով տնտեսությունը և չխրախուսելով ներգրավվածությունը ստվերային տնտեսությունում»:

«ԱՄՀ-ն ողջունում է Հայաստանի շահագրգռվածությունը ԱՄՀ-ի հետ սերտ համագործակցությունը շարունակելու գծով, երբ 2008 թ. մայիսին կավարտվի ընթացիկ ԱԿՏԱ ծրագիրը», ասաց պարոն Պորտուգալը:

ԱԿՏԱ-ն ցածր եկամուտներ ունեցող երկրներին ԱՄՀ-ի կողմից տրամադրվող արտոնյալ վարկ է: ԱԿՏԱ-ի ներքո աջակցվող ծրագրերը հիմնված են քաղաքացիական հասարակության և զարգացման գործընկերների լայն մասնակցությամբ իրականացվող աղքատության կրճատման ռազմավարությունների վրա, որոնք ամրագրված են երկրի Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում: Վերջինիս նպատակն է ապահովել, որպեսզի ԱԿՏԱ-ի ներքո իրականացվող ծրագրերը համահունչ լինեն մակրոտնտեսական, կառուցվածքային և սոցիալական քաղաքականությունների համապարփակ շրջանակներին տնտեսական աճի ապահովման և աղքատության կրճատման նպատակով: ԱԿՏԱ վարկերը տրամադրվում են տարեկան 0.5 տոկոսով և ենթակա են վերադարձի 10 տարվա ընթացքում, 5.5 տարվա հետաձգմամբ մայր գումարի վճարման գծով: